

**ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ՁԲԱՂՎՈՂ ՄԱՐԶԱՅԻՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏՈՒՄ**

18.11.2013

Նոյեմբերի 15-ին Գեղարքունիքի մարզպետարանում անցկացվեց Գեղարքունիքի մարզի հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի լիազումար նիստը: Օրակարգում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքներն էին՝ Գավառի թիվ 1 հատուկ եւ ներառական կրթության ծրագրով աշխատող դպրոցներում: Նիստին մասնակցում էին ներկայացուցիչներ Գեղարքունիքի մարզպետարանի գրեթե բոլոր վարչություններից, հասարակական տարբեր կազմակերպություններից:

Նիստը վարեց Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը: Նա իր խոսքում կարելուրեց աղքատ, խոցելի խմբերի եւ հաշմանդամություն ունեցող մարդկանց կենսական պահանջների բարելավումը եւ նրանց ինտեգրումը հասարակություն՝ հավասար հնարավորություններով:

Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետի տեղակալ Ռուբիկ Ստեփանյանն անդրադարձավ Գեղարքունիքի մարզային ենթակայության հանրակրթական հաստատություններում ներառական կրթության իրականացմանը եւ նշեց, որ 2013-14 ուսումնական տարում 72 աշակերտների համար ներառական կրթություն է իրականացվում մարզի 5 դպրոցներում՝ Գավառի, Ճամբարակի թիվ 1, Մարտունու, Վարդենիսի թիվ 2 հիմնական, Կարմիրգյուղի թիվ 2 միջնակարգ դպրոցներում: Ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում ներառական կրթություն կիրականացվի նաեւ Սեւանի թիվ 3 հիմնական դպրոցում: Ըստ բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի եզրակացության՝ Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի բոլոր 128 աշակերտները վկայագրված են եւ ներառված ներառական կրթության մեջ: Աշխատանքներ են տարվում ներառական կրթության համակարգում ընդգրկված դպրոցներում եւ մարզի համայնքներում առկա կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին ևս վկայագրելու և ընդգրկելու համապատասխան հաստատություններում:

Նիստի ժամանակ ներկայացվեց նաեւ Հայաստանի աղքատ եւ կարիքավոր անձանց կենսամիջոցների բարելավում՝ ծրագիրը, որը ֆինանսավորվում է Ճապոնիայի Սոցիալական զարգացման հիմնադրամի եւ Համաշխարհային բանկի միջոցով: Այն իրականացվում է Առաքելություն Հայաստան՝ բարեգործական հասարակական կազմակերպության կողմից: ՀԿ-ի զարգացման բաժնի մասնագետ Տիգրանուհի Մարկոսյանի հավաստմամբ՝ եռամյա ծրագիրն իրականացվում է Երեւան քաղաքում եւ 6 մարզերի 15 համայնքներում: Ծրագիրն ունի 4000 շահառու եւ նպատակ ունի միջոցների մի մասն օգտագործել ծրագրի շրջանակներում փոքր բիզնեսի ուսուցումների փորձագետի խորհրդատվական ծառայություններ

մատուցելու համար: Առաքելություն Հայաստան՝ բարեգործական հասարակական կազմակերպության սոցիալական աշխատանքի խորհրդատու Մարգարիտ Հովհաննիսյանն այս հարցում կարելուրեց ինչպես մարզպետարանի ու մարզային տարբեր կառույցների, այնպես էլ համայնքապետարանների հետ համագործակցությունը: